դարանքային տարրերի վերլուծության միջոցով հուշարձանները թվագրվեցին V դ.:

«Ճարտարապետական հուշարձաններում անցյալում օգտագործված և վերականգնման աշխատանքներում կիրառված շինանյութերի առանձնահատկություններ» թեմայով զեկուցեց ճարտարապետ Յու. Թամանյանը: Ներկայացնելով Հայկական բարձրավանդակում շինանյութերի կիրառման, շինարարական տեխնիկայի զարգացման ընթացքը և շինանյութերի լաբորատոր անալիզի տվյալները, նա եզրակացրեց, որ հիմքերի, պատերի, կրող կոնստրուկցիաների, ծածկի համար նախատեսված շինանյութերի և այլ տարրերի ստորաբաժանումը վերականգնման աշխատանքների պրակտիկայում հնարավորություն է տալիս ավելի լրիվ օգտագործել դրանց հնարավորությունները, իսկ նոր շինանյութերի կիրառումը նպաստում է հուշարձանների ամրությանը:

Նստաշրջանի արդյունքներն ամփոփեց արվեստի ինստիտուտի դիրեկտոր, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Ռ. Զարյանը: Նա գոհունակությամբ ընդգծեց նստաշրջանում կարդացված թեմաների բազմազանությունը, գիտական խորությունը, որակելով դրանք իբրև Թ. Թորամանյանի սկզբնավորած գործի արգասավոր արդյունքներ:

Ն. Ծ. ՊԱՊՈՒԽՅԱՆ

ԱՆՎԱՆԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Մայիսի 31-ին Զվարթնոցի հնօրյա կառույցի պարապի ներքո տեղի ունեցավ ՀՍՍՀ ԳԱ նախագահության նիստը՝ նվիրված Թորոս Թորամանյանի անվան հուշամեդալի հանձնման արարողությանը: Բացելով նիստը՝ ՀՍՍՀ ԳԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Հ. *Համբարձումյանն* ասաց, որ հայ ճարտարապետության մեծ երախտավոր Թորոս Թորամանյանի ծառայությունները ըստ արժանվույն գնահատելու, ճարտարապետության բնագավառում ետ թորամանյանական առավել խոր ու բազմակողմանի հետազոտությունները սատարելու նպատակով ստեղծվել է Թ. Թորամանյանի անվան հուշամեդալ, որը այսուհետև կտրվի չորս տարին մեկ՝ գիտության այդ բնագավառի առավել արժանավորին, վաստակած վաստակավորին: Ուշագրավն այն է, որ առաջին անգամ հանձնվող հուշամեդալի միակ ու արժանավոր թեկնածուն ռուս մեծ ժողովրդի զավակ, հայ ճարտարապետության պատմության հետազոտող Նիկոլայ Միխայլովիչ Տոկարսկին է:

Այնուհետև Ն. Մ. Տոկարսկու կյանքն ու գործունեությունը գնահատող համապարփակ զեկուցումով հանդես եկավ ՀՍՍՀ ԳԱ հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիկոս *Ծ. Պ. Աղայանը:*

— Հայկական ինքնատիպ ճարտարապետության պատմության առաջին գիտնական-հետազոտողը,— ասաց զեկուցողը,— և վերահաստատողը եղավ Թորոս Թորամանյանը: Ծնվել է 1864-ին, Շապին-Գարահիսարում: Նախ ուսանել է Կ. Պոլսում, ապա՝ Փարիզում (1900 թ.)՝ միաժամանակ ծանոթանալով թանգարանային նյութերին, մշակութային կոթողներին: 1903 թ. գալիս է Հայաստան՝ Ն. Մառի օժանդակությամբ (1904 թ.) չափագրելու պատմական Անիի հուշարձանները: Ն. Մառը նրա մասին գրել է. «Ես առավել առողջ լույս եմ սպասում ճարտարապետական հուշարձանների լեզվից, երբ մենք կսովորենք այն հասկանալ: Թորամանյանի մեջ ես տեսնում եմ այդ լեզվի առաջին ուսուցչին»:

Թորամանյանն արտակարգ եռանդով նվիրվեց Զվարթնոցի ուսումնասիրությանը, որի վերակազմության նախագիծը հրատարակեց 1905 թ.: Նրա ջանքերի ու աշխատակցության շնորհիվ նշանավոր արվեստագետ Ստրժիգովսկին հայ ճարտարապետության մասին գրեց երկու ստվարածավալ հատորներ և եվրոպական գիտության առաջ բաց արեց հայ ճարտարապետության առինքնող նկարագիրը: Թորամանյանի աշխատանքն ավելի արդյունաշատ եղավ սովետական իշխանության տարիներին, ուստի և մեծ երախտավորը նախ արժանացավ գիտության վաստակավոր գործչի կոչման և ապա ՀՍՍՀ ԳԱ նախաձեռնությամբ հրատարակվեցին նրա աշխատությունները (երկու հատորով): Այդ առթիվ Ավետիք Իսահակյանը գրեց. «Թորոս Թորամանյանը իր սիրալի գործերով բոլոր ժամանակների հայ ժողովրդի համար դարձավ Թորոս ճարտարապետ և մեծացավ, պատմականացավ: Եթե ճարտարապետությունը քարացած երաժշտու-

թյուն է, ապա Թորոս ճարտարապետը այդ քարացածը վերածել է կենդանի երգի: Նա մեր հոյակապ ավերակների և հուշարձանների նույնքան հոյակապ երգիչն է»:

Թ. Թորամանյանի անվան հուշամեդալի հաստատման փաստը,— ասաց ակադ. Ծ. Պ. Աղայանը,— վկայում է հայկական ճարտարապետության ուսումնասիրության գործի կարևորության ճանաչումը: Ո՞վ է այն մեծ երախտավորը, որ կարժանանա այդ մրցանակին: Հայ ճարտարապետների բանակը իր միահամուռ ձայնը տվեց Նիկոլայ Միխայլովիչ Տոկարսկու օգտին: Իր աշխատանքները սկսելով դեռևս Անիում, Ն. Մառի գլխավորած արշավախմբում, Ն. Տոկարսկին կես դարից ավելի է, ինչ մեկը մյուսի ետևից լույս է ընծայում իր ուսումնասիրությունները՝ նվիրված հայ ճարտարապետության պատմության հանգուցային խնդիրներին:

Տոկարսկին Մառի հանձնարարությամբ 1923 թ. մեկնում է Հայաստան, հետազոտում մի շարք հուշարձաններ, իսկ 1936 թ. մասնակցում նախ Ամբերդի (Օրբելու ղեկավարությամբ), այնուհետև Դվինի, Կարմիր բլուրի պեղումներին: 1941—1945 թթ. Տոկարսկին աշխատում է հուշարձանների պահպանության կոմիտեում, 1944 թ.՝ որպես ավագ գիտաշխատակից ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտում: Հատկապես ուշագրավ են նրա պեղումները Զրվեժում և Ողջաբերդում, որտեղ նա հայտնաբերեց վաղ միջնադարյան մի շարք ուշագրավ հուշարձաններ, այդ թվում Ողջաբերդի գմբեթավոր հուշարձանը, որն ըստ էության նախատիպն է հետագայում այնքան լայն տարածում գտած խաչաձև գմբեթավոր կառուցվածքների:

1961 թ. լույս է տեսնում Տոկարսկու «Հայաստանի ճարտարապետությունը IV—XIV դդ.» մենագրությունը, որն արգասիք է հեղինակի բազմամյա աշխատանքի և ամփոփում է վերջին տարիների հետազոտությունների արդյունքները: Նա շարունակեց Թ. Թորամանյանի մեծ գործը և իր շուրջը համախմբելով երիտասարդ կադրեր, առաջ մղեց հայկական ճարտարապետության ուսումնասիրությունը,— վերջում ասաց Ծ. Պ. Աղայանը:

Այնուհետև ՀՍՍՀ ԳԱ գլխավոր գիտական-քարտուղար Ս. Բասկունցը հրապարակեց ակադեմիայի նախագահության որոշումը Թ. Թորամանյանի անվան հուշամեդալը Ն. Տոկարսկուն շնորհելու մասին:

Շնորհակալության խոսքով ուսանդես եկավ Ն. Մ. Տոկարսկին: Նա ասաց.

— Հայ ժողովուրդը անցել է մեծ ու դժվարին պատմական ուղի, բայց, այդուհանդերձ, մեզ է հասցրել իր դարավոր մշակույթը՝ բազմաթիվ ճարտարապետական անզուգական հուշարձաններով ու մշակույթի օջախներով: Հին հայոց ճարտարապետական ինքնատիպ հուշարձանները վաղուց ի վեր հայազգի և օտարազգի մասնագետ-հետազոտողների հիացմունքի առարկան են դարձել: Բայց, հարկավ, հին Հայաստանի ճարտարապետության առաջին ճշմարիտ ու գիտականորեն հիմնավորված գնահատությունը պատկանում է Ն. Մառին, որի Անիում կատարած երկարատև պեղումների ավարտը եղավ 1934 թ. հրատարակված «Անի» աշխատությունը: Հայ ճարտարապետության մյուս երախտավորը վաստակաշատ Թորոս Թորամանյանն էր: Մառի և Թորամանյանի աշխատանքների հիմքում ընկած էր հուշարձանների սիստեմատիկ ու տևական ուսումնասիրման արդյունքը: Պակաս կարևոր չէ և այն պարագան, որ Մառը և Թորամանյանը ճարտարապետական հուշարձանը դիտում էին երկրի պատմության հետ ունեցած կապի համադիր քննությամբ: Վերջում Ն. Մ. Տոկարսկին շնորհակալություն հայտնեց ՀՍՍՀ ԳԱ նախագահությանը, հասարակական բաժանմունքին և արվեստի ինստիտուտին:

ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի դիրեկտոր, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Ռ. Վ. Զարյանը Ն. Մ. Տոկարսկուն ուղղված իր ողջույնի խոսքում ասաց.

— Արվեստի ինստիտուտի գիտական աշխատողները իրենց սրտագին շնորհավորանքներն են բերում հայ ճարտարապետության պատմության խոշոր մասնագետին՝ Նիկոլայ Միխայլովիչ Տոկարսկուն, գիտության այդ բնագավառի մեծագույն ներկայացուցչի, նրա գիտական հիմունքները մշակող Թորոս Թորամանյանի անվան հուշամեդալին արժանանալու առիթով: Առաջին անգամն է հուշամեդալ տրվում հայ ճարտարապետությամբ զբաղվողին: Հիմա ստանում է ուսուցիչը, հետո կստանան նրա արժանավոր աշակերտները: Այս ավերակները, որ մեզ հետ խոսում են գեղեցիկից, հպարտությունից ու հավիտենականությունից, հաստատում են այն հայտնի ճշմարտությունը, թե արդարությունը կարող է ուշանալ, բայց չի կարող չընհայտնվել: Միայն թե մարդ պետք է ուժ

գտնի իր մեջ հավատալու, թե իր արածն արդար է ու չնահանջի, եթե անգամ հայածվում է մի գործի համար, որի առիթով տարիներ անց պիտի արժանանա բարոյական բարձրագույն վարձատրության, ինչպես այսօր է: Առանձնահատուկ իմաստունի և այն, որ այդ բարձր պարգևի առաջին արժանացողը Տոկարսկին եղավ, ռուս գիտնականը, ինչպես նաև այն, որ հուշամեդալի հանձնումը տեղի է ունենում 1972 թ.՝ Սովետական Միության կազմավորման հոբելյանական տարում:

ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի դիրեկտոր, պրոֆ. *Բ. Ն. Առաքելյանն* ասաց.

— Դեռևս 1916 թ. Նիկոլայ Միխայլովիչ Տոկարսկին մասնակից եղավ Անիի պեղումներին, ուր և սկսեց հայկական ճարտարապետության ուսումնասիրությունը, որը նա այնուհետև շարունակեց անընդմեջ: 1936 թ. նա մասնակցեց Ամբերդի, այնուհետև Դվինի պեղումներին, իսկ վերջին տասնամյակներում ինքնուրույն պեղումներ կատարեց Զրվեժում և Ողջաբերդում: Ն. Մ. Տոկարսկին Թորոս Թորամանյանի անվան հուշամեդալը վաստակել է հայ ճարտարապետության պատմության ու հնագիտության ասպարեզում իր մատուցած գիտական մեծ ծառայություններով:

Նիկոլայ Միխայլովիչը վերջերս կյանք տվեց մի մոռացված, բայց կարևոր աշխատության: Դեռևս 1915 թ. Ն. Մառը հանձնարարում է երիտասարդ գիտնական Ղիփշիձեին կազմելու Անիի քարայրների նկարագրությունը, իսկ Տոկարսկուն պատվիրում սրբագրել այն և չափագրել քարայրների առավել կարևոր հուշարձանները: Ն. Մ. Տոկարսկին իրականում վերակենդանացրեց «Անիի քարայրները» գիրքը (գրված մատիտով, դժվարընթեռնելի, կիսաջնջված), որը լույս տեսավ վերջերս:

Այնուհետև Ն. Մ. Տոկարսկուն ողջունեցին Հայաստանի ճարտարապետների միության անունից *Լ. Ս. Զորեանը*, Էջմիածնի շրջանի մտավորականության անունից վաստակավոր ուսուցիչ *Հ. Դանիելյանը*, նույն շրջանի աշխատավորության անունից՝ *Ռ. Հ. Զաքոյանը:*

Վերջում եզրափակման խոսքով հանդես եկավ ՀՍՍՀ ԳԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը: